ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 հունվարի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

1
(2667)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 1

«Ժողովուրդ» օրաթերթը նախորդ տարի հատուկ շարք ներկայացրեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից արված հայտարարությունների եւ իրականության հակասության մասին: Այդ ընթացքում 160 խոստում-հայտարարություն ենք արձանագրել, որոնք իրականություն չեն դարձել, կամ, որ նույնն է, ողջ ընթացքում Փաշինյանը ստել է: Այժմ նույն շարքի շրջանակներում «Ժողովուրդ» օրաթերթը կանդրադառնա այն հայտարարություններին, որոնք արվել են Փաշինյանի թիմակիցների կողմից եւ կրկին սուտ են եղել, իրականություն չեն դարձել: Այսպես, դեկտեմբերի 20-ին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտարարեց, թե հինգ տարում ՀՀ-ում քաղաքացիների եկամուտներն ավելացել են 60-70 տոկոսով: «Եթե մենք համեմատենք, թե ինչքան է մի աշխատողի աշխատավարձի աճը 5 տարի առաջվանից, դա մոտավորապես 60-70 տոկոսով ավելի բարձր է, քան էն ժամանակ: Ցանկացած թվերով կարող ենք հիմնավորել, որ մեր իշխանության ժամանակ էապես աճել են մարդկանց իրական եկամուտները, այսինքն՝ գնաճից հետո»,-նշեց էկոնոմիկայի նախարարը: Եվ չնայած Վիճակագրական կոմիտեն դեռեւս չի հրապարակել ընթացիկ տարվա նոյեմբեր ամսվա միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տվյալները, «Փաստերի ստուգման հարթակ»-ը, հոկտեմբեր ամսվա տվյալների հիման վրա, ուսումնասիրել է, թե ինչպես է փոխվել ամսական միջին աշխատավարձը վերջին 5 տարիների ընթացքում, եւ որքան է կազմել գնաճը: 2017 թվականի հոկտեմբերին Հայաստանում միջին ամսական աշխատավարձը կազմել էր 188,500 դրամ. նախորդ տարվա՝ 2021-ի հոկտեմբերին այս ցուցանիշը կազմել էր մոտ 200 հազար դրամ, իսկ արդեն այս տարվա նախնական տվյալներով՝236,900 դրամ, այսինքն՝վերջին 5 տարում Հայաստանում միջին ամսական աշխատավարձն աճել է 48.400 դրամով կամ 25.7 տոկոսով: Վերջին 5 տարիների ընթացքում միջին ամսական աշխատավարձն աճել է 25.7 տոկոսով, իրական գնաճը կազմել է 25.5 տոկոս, այլ կերպ ասած՝մարդկանց զուտ եկամուտներն ավելացել են ընդամենը 0.25 տոկոսով: Այսպիսով, փաստենք, որ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի կողմից նշված՝ եկամուտների 60-70-տոկոսանոց աճը չի համապատասխանում իրականությանը, իսկ աշխատավարձերի աճն ու գնաճը գրեթե նույնն են, հետեւաբար պնդումը, թե աշխատողների ֆինանսական դրությունը բարելավվել է, քանզի աշխատավարձերի աճն ավելի մեծ է, քան գնաճը, իրականում մանիպուլյատիվ է: Իրականում վերջին 5 տարիներին իրական եկամուտներն աճել են ընդամենը 0.25 տոկոսով, այլ ոչ թե 60-70 տոկոսով:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ միջազգային կազմակերպությունները, արեւմտյան երկրների մի քանի դեսպաններ վերջերս «բողոքի նոտա» են հղել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը առ այն, որ վերջիններս, դեռեւս ավագանու ընտրությունը չկայացած, պարբերաբար հայտարարում են, թե ՔՊ-ն հաղթելու է, եւ հաջորդ քաղաքապետն իրենցից է լինելու: Մեր տեղեկությունը փորձեցինք ճշտել ՔՊ խմբակցության պատգամավոր, ՔՊ վարչության փոխնախագահ Գեւորգ Պապոյանից, որն ասաց, թե նման տեղեկություն չունի. «Ձեզնից եմ առաջին անգամ լսում»: Մեկ այլ պատգամավոր, կուսակցության վարչության մյուս փոխնախագահ Վահագն Ալեքսանյանն էլ, մեր հարցին ի պատասխան, ասաց. «Բնականաբար, եթե թեկնածուն մենք ենք առաջադրել, վստահություն ունենք, որ կհաղթի: Բայց, ճիշտն ասած, ես չեմ հիշում, որ իշխանության ներկայացուցիչները նման հայտարարություններ արած լինեն, որ մի հատ էլ «բողոքի նոտա» ստանանք դրա համար»: Նկատենք, որ արեւմտյան երկրների դեսպանները իրենց դժգոհությունները սկսել են արտահայտել հիմնականում ՔՊ վարչության կեղծված ընտրություններից հետո: Ընտրական գործընթացների նկատմամբ անվստահությունը ժողովրդավար երկրների ներկայացուցիչների մոտ սկսվել է իշխող կուսակցության կեղծիքներից հետո:

«Ժողովուրդ» օրաթերթը հունվարի 4-ին գրել էր, որ ՀՀ ներքին գործերի նախարար կնշանակվի ոստիկանապետ Վահե Ղազարյանը: Երեկ նշանակումը պաշտոնապես եղավ: Մեր տեղեկությունների համաձայն՝ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՔՊ-ական իր թիմակիցներին բացատրել է, թե ինչու պետք է հենց ներկայիս ոստիկանապետ Վահե Ղազարյանը նշանակվեր ներքին գործերի նախարար: ՔՊ թիմում տարակուսել էին, թե ինչպես պետք է ոստիկանապետը ներկայանա ԱԺ նիստերին, պատասխանի հարցերին, երբ այսքան ժամանակ հրապարակային գործունեություն չի ծավալել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝Փաշինյանը թիմակիցներին հասկացրել է, որ, նախ, որոշումը իրենն է, ապա բացատրել է, որ ներքին գործերի նախարարը պետք է համակարգին տիրապետող լինի, իմանա աշխատակիցների աշխատելաոճը, նրանց ով լինելը, իսկ համակարգին լավ տիրապետում եւ աշխատանքային երկար տարիների փորձ ունի հենց Վահե Ղազարյանը: ԱԺ պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի պլանները ձախողվեցին թերեւս. նա ամեն ինչ անում էր, որպեսզի Ղազարյանը նախարար չդառնա: Ինչպես հայտնի է, 2022 թվականի դեկտեմբերի 16-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց Ներքին գործերի նախարարություն ստեղծելու մասին նախագիծը: Այսպիսով, ըստ ընդունված նախագծի՝ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը կդադարեցնի իր գործունեությունը: ՆԳՆ ենթակա մարմիններ կլինեն Ոստիկանությունը, Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը, Փրկարար ծառայությունը:

Նորանշանակ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը պաշտոնավարման առաջին օրերից նախկին եւ ներկա պաշտոնատար անձանց մասով նոր քրեական վարույթներ է նախաձեռնում, ուստի «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ գլխավոր դատախազությունից հետաքրքրվեց, թե ինչ փուլում է գտնվում ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի՝ կալանքի տակ գտնվող առանձնատան վաճառքի առեղծվածը, եւ, առհասարակ, 9 ամիս տեւած քննության ընթացքում կա որեւէ մեղադրյալ այն մասով, թե ինչպես արգելանքի տակ դրված գույքը վաճառվեց: Ի պատասխան՝գլխավոր դատախազությունից մեզ հայտնեցին. «նախաքննության փուլում է, քրեական վարույթով մեղադրյալ չկա»: Հետաքրքիր է՝ինչու Աննա Վարդապետյանը չի հրահանգում պարզել, թե ինչպես Նիկոլ Փաշինյանի «գրպանային օլիգարխ» դարձած Նարեկ Նալբանդյանը, որ պետությունից «փակովի» տարբերակով գնեց Ծաղկաձորի «Գոլդեն Փելես» հյուրանոցը, նաեւ այդ տարբերակով գնեց նախկին պաշտոնյայի՝ արգելանքի տակ գտնվող գույքը: Ապօրինի ծագման գույքի նկատմամբ մեծ հետաքրքրություն ունեցող Վարդապետյանը պետք է նաեւ այս վարույթով կոնկրետ հանձնարարականներ տար. արդյոք Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի՞ «մատն էր խառը», թե՞ նախկին դատախազ Արթուր Դավթյանն էր ծածկադմփոց արել գործը: Փաստ է, որ եթե նախաքննական մարմինն այս ընթացքում որեւէ բան բացահայտած լիներ առանձնատան վաճառքի գործով, կհայտներ, սակայն քար լռություն է:

ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

ԺԱՄԱՆԱԿ Է ՀԱՐԿԱՎՈՐ

Բնատպիտպանական arհեսակաճ ղասճառաբանությունններով Ադրբեջանի մի cարf fաղաfացիներ, nrnնf ներկայանում են իբրեւ թե «բնատպիտպանակsիվիսներ», cարունակում են փակ պահել Ստեփանակերs-Գորիս մայրուղին: Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության հաղորդագրություններում նշվում է, թե Ռուսաստանի Դաշնությունը բանակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի հետ Լաչինի միջանցքը բացելու հարցով, սակայն, ըստ էության, բանակցությունները արդյունք չեն տվել:

Այս եւ այլ հարցերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ռուս վերլուծաբան Վլադիմիր Եվսեեւի հետ:

-Պարո՛ն Եվսեեւ, ինչո՞ւ Ադրբեջանը դիմեց նման քայլի, եւ մինչեւ այժմ բանակցություններն արդյունք չեն տալիս:

-Ադրբեջանը թիրախավորել է խաղաղապահներին նրանց Ղարաբաղից դուրս բերելու համար. Ի սկզբանե Ադրբեջանը մանդատ չէր տվել, եւ այս առաքելությունը ՄԱԿ-ի կողմից հաստատված չէր: Սա նոր երեւույթ չէ, պարզապես Ադրբեջանն այս անգամ այլ պատրվակով է փորձում հասնել իր նպատակներին: Ադրբեջանը նաեւ շտապում է, քանի որ Ռուսաստանը զբաղված է շատ ավելի թեժ օջախներով եւ չունի բավարար ռեսուրս Ղարաբաղն անընդհատ ուշադրության կենտրոնում պահելու համար: Ռուսաստանում շատ լավ հասկանում են, որ պետք է ժամանակ ձգել եւ չլարել իրավիճակը:

-Այսինքն՝ այս քայլը խաղաղապահների դե՞մ էր նաեւ:

-Բոլոր հնարավոր գոտիներում հավելյալ խնդիրներ են ստեղծվում ռուս խաղաղապահների համար: Ռուսաստանի շուրջ հնարավորինս շատ անկայունություն են փորձում ստեղծել եւ ուկրաինական իրադարձությունների ֆոնին նպատակ ունեն թուլացնել ՌԴ-ն, սակայն ՌԴ-ն ունի լծակներ իրավիճակը կարգավորելու համար, պարզապես ժամանակ է պետք: Եվ, այո, այստեղ խնդիրը խաղաղապահները չեն, խնդիրները քննարկվում ու լուծվում են քաղաքական մակարդակում:

-Ինչպե՞ս եք գնահատում միջազգային արձագանքը:

-Ես կարծում եմ, որ Լաչինի միջանցքի շրջափակումից առաջ հստակ հաշվարկներ են արվել, թե միջազգային հանրության կողմից ինչ արձագանքներ են լինելու իրավիճակին, ինչ շահեր են կենտրոնացած լինելու: Եթե այս ամենը տեղի չունենար Ուկրաինայում ՌԴ գործողության ֆոնին, լիովին այլ պատկեր կարելի էր ակնկալել:

Իրավիճակի արագ հանգուցալուծում չի կարող լինել, ուստի կոչերը բացարձակ որեւէ հարց չեն լուծում: Իհարկե, Արեւմուտքը փորձում է պատասխանատվությունը գցել միայն ՌԴ ի վրա: Այս ֆոնին Ռուսաստանն ավելի զգույշ դիրքավորում է ընդունել՝ ելնելով իր աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային շահերից: Ռուսաստանի գլխավոր խնդիրն այսօր Ուկրաինայում է, իսկ Արեւմուտքն ամենուր փորձում է, օգտագործելով ՌԴ իրավիճակը, կրճատել ՌԴ ազդեցությունը:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՔՐԵԱԿԱՆԱՑՎԵՑ ➪

Կառավարության կողմից ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» նախագիծն արդեն խորհրդարանում է: Կառավարությունը պատասխանատվություն կսահմանի ինքնիշխանությունից հրաժարվելու կոչեր հնչեցնելու համար:

Նախագծի ընդունման արդյունքում քրեորեն պատժելի արարքներ են համարվելու ինքնիշխանությունից հրաժարվելուն, բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը լրիվ կամ մասնակի սահմանափակելուն ուղղված գործողություններ կատարելը, ինչպես նաեւ ինքնիշխանությունից հրաժարվելուն ուղղված հրապարակային կոչերը:

Նախագծով առաջարկվում է ինքնիշխանությունից հրաժարվելուն ուղղված հրապարակային կոչերի համար սահմանել տարբեր չափի տուգանքներից մինչեւ առավելագույնը 3 տարվա ազատազրկում, կոչերը տեղեկատվական տարբեր աղբյուրներով, ԶԼՄ-ներով տարածելու համար՝ 2-5 տարվա ազատազրկում: Ինքնիշխանությունից հրաժարվելուն ուղղված տարբեր բռնի գործողություններ կատարելու համար առաջարկվու է սահմանել 10-15 տարվա ազատազրկում:

ՆԱԻՐԱ ՀԱՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐ»

ՀՀ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարարությունն օրենքի նախագիծ է շրջանառել, ինչը ենթադրում է՝ «կարմիր գծերի» գծանշում այսուհետ կարող է այլ գույնով կատարվել:

Ըստ նախագծի նախնական տարբերակի՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի եւ վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում նախատեսվում է հետեւյալ փոփոխությունը կատարել. «Այն ավտոկայանատեղը, որի համար նախատեսվում է վճարի գանձում, պետք է առանձնացված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված գույնին ու ձեւին համապատասխան գետնանշումով»:

Նիկոլ Փաշինյանը, հիշեցնենք, ընդդիմադիր եղած ժամանակ հաճախ էր խոսում ու քննադատում ավտոկայանատեղերի համար առանձնացված «կարմիր գծերը»: Այժմ, փաստորեն, Փաշինյանի իշխանությունը պատրաստվում է հրաժարվել «կարմիր գծերի» միայն կարմիր գույնից:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՄԵԾ ԳԼԽԱՑԱՎԱՆՔ

Կենսաթոշակն անկանխիկ ստանալու կարգը մեծ գլխացավանք է առաջացրել թոշակառուների մոտ: Երեկ այդ պատճառով հայաստանյան բանկերում մեծ ու երկար հերթեր էին. թոշակառուները փորձում էին քարտեր հանել: Նշենք, որ թոշակառուների մեծ մասը դեռ չի հասցրել ընտրել թոշակ վճարող կազմակերպությունը, այդ իսկ պատճառով երեկ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հատկապես մարզային բանկերում, հերթեր էին գոյացել: Տեղեկացնենք, որ հունվարի 1-ից Հայաստանի հազար եւ ավելի բնակիչ ունեցող գյուղերի մինչեւ 75 տարեկան բոլոր թոշակառուները, որոնք հաշմանդամության առաջին կամ երկրորդ կարգ չունեն, թոշակը ստանում են անկանխիկ եղանակով՝ քարտով: Բացի այս, մեկ այլ խնդիր եւս. Հայաստանի հեռավոր եւ սահմանամերձ գյուղերում ապրող թոշակառուն հնարավորություն չունի քարտով առեւտուր անել կամ կանխիկացնել գումար, այդ նպատակով նա ստպված է լրացուցիչ գումար ծախսել՝ հասնելու մոտ գտնվող քաղաք: Մի խոսքով, մարդկանց հասանելիք թոշակների վճարումն ու անգամ ծախսը Նիկոլ Փաշինյանի կառավարությունը գլացավանք է դարձրել:

ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆՀԵՏԱՆԱԼ

Արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված նախագիծը, որ նախատեսում է համացանցի սահմանափակումներ կիրառել արտակարգ դրություն հայտարարվելու ժամանակ, ըստ տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանի, մինչեւ հրապարակվելը քննարկման պատճաշ փուլ չի անցել:

Ավելին՝ անհասկանալի է, թե ով է այդ գործընթացի՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ ու լրացումներ անելու նախագիծ մշակելու իրական նախաձեռնողը:

Նրա համոզմամբ՝ նախագիծը բովանդակային առումով քննարկման իրենց հարցը չէ:

«Ո՞վ է այս խնդրի իրական շահառուն՝ բանա՞կը, կառավարությո՞ւնը, ԱԱԾ-ն, թե՞ մեկ ուրիշ մարմին: Իսկ եթե հստակ չէ, դա արդեն իսկ խնդրահարույց է, քանզի անհասականալի է՝ ով է ցանկանում ինչ-որ բան փոխել»,-ասում է Մարտիրոսյանը:

Մասնագետի գնահատմամբ՝ հաշվարկված չէ, ու հստակ չէ, թե ինչ կարող է լինել, եթե հանկարծ որոշվի արգելափակել համացանցը, որովհետեւ մինչեւ այս պահը որեւէ մեկը նման բան չի արել, ու ոչ ոք չի կարող իմանալ՝ինչ հետեւանքերի կարող է դա բերել:

ԱՐՑԱԽՈՒՄ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ Է

Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի՝ օրերս արած հայտարարությունը, թե Լաչինի միջանցքը բացելու մասով այս պահին բանակցություններ չեն ընթանում, մի շարք հարցեր է առաջացրել արցախցիների մոտ:

«Ժողովուրդ» օրաթերթի արցախյան աղբյուրները փոխանցում են, որ տեղացիները մտահոգված են՝ եթե բանակցություններ չեն ընթանում, ապա էլ ինչպես, ինչ մեթոդով կամ մեխանիզմներով է Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը բացվելու: «Այստեղ այնպիսի տպավորություն է, թե բոլորը միայն հայտարարություններ են անում կամ գրառումներ կատարում սոցիական ցանցերում, հատկապես՝ հայաստանյան իշխանությունը: Անորոշություն է, մարդիկ միմյանցից են փորձում հարցերի պատասխանը ստանալ, բայց ապարդյուն»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Արցախի մեր աղբյուրը:

Մենք տեղեկացանք նաեւ, որ այս օրերին Արցախում նաեւ ճգնաժամային կառավարումն է վատ իրականացվում, օրինակ՝ մի ընտանիքի բոլոր 5 անդամները խանութում կարող են հերթ կանգնել ու 5-ն էլ, ենթադրենք, թթվասեր կամ հավկիթ գնել, բայց մյուսները, որ մանկահասակ երեխաներ ունեն ու տանից դուրս գալ չեն կարողանում, զրկվում են սննդամթերքից:

«Կտրոնով պետք է լինի մի շարք ապրանքների վաճառքը, որ, օրինակ, ամեն ընտանիք 2 թթվասերից ավելի չկարողանա գնել: Այս պահին միայն հացն է, որ առանց հերթերի է վաճառվում, հացի պակասություն չկա դեռեւս, ու հենց դա է գլխավոր պատճառը, որ մարդիկ չեն ահաբեկվում, խուճապի չեն մատնվում»,- ներկայացրեց մեր զրուցակիցը:

ՄԵՆԱՇՆՈՐՀ՝ ԱՐՑԱԽՈ՞ՒՄ

Արցախը Հայաստանին կապող ավտոճանապարհը շարունակում է փակ մնալ: Օրեր առաջ Արցախի կառավարությունը որոշում էր կայացրել բնակչության առաջնային կարիքների ապահովման համար պետական պահուստային պաշարներից որոշ ապրանքատեսակների մատակարարում իրականացնել խանութներին: Արցախի պետնախարարը կարեւորել էր ապրանքատեսակների համաչափ բաշխումը, որպեսզի բնակչությունը հնարավորություն ունենա դրանք ձեռք բերել բոլոր խանութներից:

Եվ, ահա, այս որոշումից հետո ահազանգ ենք ստանում Արցախից, որ, կարծես թե, այնտեղ մենաշնորհ է ձեւավորվում, եւ ոչ բոլոր խանութներն են ապրանք ստանում: Մեզ ահազանգած քաղաքացին հայտնում է, որ հերթերը հիմնականում գոյանում են միայն «Կապիտալ» խանութների առջեւ, իսկ դա ենթադրում է, որ թերեւս մենաշնորհ է ձեւավորվում:

ԽՆԴԻՐՆԵՐ

Ի՞ՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ՎԵՐԻՆ ՇՈՐԺԱՅՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղում անվտանգային եւ հումանիտար խնդիրները գնալով խորանում են, ինչի հետեւանքով ընտանիքների մեծ մասը լքել է գյուղը: ArmLur.am-ի հետ զրույցում Վերին Շորժայի համայնքապետ Արտյոմ Երանոսյանը նշեց, որ ադրբեջանցիները պարբերաբար կրակում են գյուղի ուղղությամբ, հատկապես՝ գիշերային ժամերին. «Ժամանակ առ ժամանակ կրակոցներ են լինում. ընտանիքները, որոնք մանկահասակ երեխաներ ունեն, գնում են ավելի ապահով վայրեր: Մարդիկ իրենց երեխաների ապահովության մասին են մտածում: Դեպքեր են եղել՝ անձամբ ես եմ իջեցրել իրենց ներքեւի գյուղեր, գնում են Վարդենիս ու այլ գյուղեր, բայց այս ամենը ժամանակավոր բնույթ է կրում: Մեկ- մեկ գալիս են, իրենց տները ստուգում են, նորից գնում են»,-ասաց համայնքապետը:

Գյուղի ջրային խողովակն էլ, որը 2022թ.-ի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի հետեւանքով հայտնվել էր ադրբեջանցիների վերահսկողության տակ, վերջերս ամբողջությամբ սառել էր, ինչի հետեւանքով շուրջ երկու օր ջուր չի եղել գյուղում. «Մեր զինվորականների շնորհիվ կարողացել ենք կարգավորել այդ հարցերը, անվադողեր ենք վառել, որ խողովակը հալեցնենք, երկու օր է՝ ջուր չունեինք, բայց հիմա արդեն ունենք»,-հավելեց նա:

Հիշեցնենք, որ խնդրի մասին ահազանգել էր նաեւ ՀՀ նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը՝ նշելով, որ 2022թ. սեպտեմբերի 13-14-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի նկատմամբ զինված հարձակման հետեւանքով Գեղարքունիքի մարզի Ներքին Շորժա ու Վերին Շորժա գյուղերում քաղաքացիական կյանք այլեւս չկա, սարատեղիներն ամբողջությամբ անցել են ադրբեջանական դիտարկման վերահսկողության ներքո, իսկ գյուղերը դատարկվել են:

Այս փաստերն արձանագրվել են Իրավունքի եւ արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամի կողմից 2022թ. նոյմբերի 25-ին՝ մարզի սահմանային բնակավայրերում փաստահավաք աշխատանքների ժամանակ:

Վերին Շորժայի սարատեղիի հատվածադրբեջանական զինված ծառայողները ներխուժել էին դեռեւս 2021թ. մայիսի 12-ից, անօրինական տեղակայվել ՀՀ բնակիչներին օրինական փաստաթղթերով պատկանող հողատարածքներում, որտեղից իրականացրել են պարբերական կրակոցներ գյուղի ուղղությամբ, ահաբեկել են անասնապահությամբ զբաղվող բնակիչներին, զբաղվել անասնագողությամբ, արոտավայրեր այրելով, ապօրինաբար տիրացել ջրավազաններ ու բնական աղբյուրների՝ մարդկանց զրկելով ջրից, եւ այլն:

2022թ. սեպտեմբերի 13-14-ին ՀՀ ներխուժման հետեւանքով առաջ են եկել անվտանգության լրջագույն խնդիրներ նաեւ Սոթք, Այրք, Ջաղացաձոր, Կուտական, Փոքր Մասրիկ եւ այլ գյուղերի համար:

Գեղամաբակ, Ջաղացաձոր, Այրք, Վերին Շորժա, Ներքին Շորժա եւ այլ գյուղերի համար ջրային ավազաններն ու ջրի բնական աղբյուրները հայտնվել են ադրբեջանական վերահսկողության կամ դիտարկման ներքո 2021թ. մայիսից ու առավել խորացել 2022թ. սեպտեմբերի պատերազմից հետո. գյուղերում ջրի հասանելիության լուրջ խնդիրներ են առաջ եկել, կամ ջուր չկա առհասարակ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԺԱՄԱՆԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ շաբաթ օրը Հայաստան են ժամանել ԵՄ տեխնիկական գնահատման խմբի անդամները: ԵՄ դիտորդական առաքելությունը պետք է կրկին տեղակայվի Հայաստանում, եւ այժմ դիտարկում են դրա տեղակայման հնարավորության հարցը:

ՀՀ ԱԳՆ-ից տեղեկանում ենք, որ երեկ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է ԵՄ տեխնիկական գնահատման խմբի անդամներին՝ Մարչին Վիդռաjի գլխավորությամբ: Հանդիպմանը մասնակցել է նաեւ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինը:

Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ կողմերն անդրադարձ են կատարել դեկտեմբերի 19-ին ավարտված ԵՄ դիտորդական առաքելության աշխատանքներին: Այս համատեքստում նախարար Միրզոյանը բարձր է գնահատել դիտորդական առաքելության դերը տարածաշրջանում կայունության ամրապնդման ու Հայաստանի նկատմամբ նոր ագրեսիաների կանխարգելման գործում եւ պատրաստակամություն հայտնել շարունակելու համագործակցությունը: Քննարկվել են նաեւ համատեղ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

ԱՅՑ՝ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները հերթական այցն են կատարել Բաքվում պահվող հայ գերիներին: Այս մասին ArmLur.am-ին հայտնեց ԿԽՄԿ պատվիրակության հաղորդակցման ծրագրերի ղեկավար Ջառա Ամատունին՝ հավելելով, որ այցը եղել է դեկտեմբերին:

ԿԽՄԿ ներկայացուցիչները ծանոթացել են գերիների առողջական վիճակին եւ նրանց պահման վայրին:

Գերիներին հնարավորություն է տրվել հեռախոսով զրուցել իրենց հարազատների հետ, նրանք ԿԽՄԿ ներկայացուցիչների միջոցով նաեւ նամակներ եւ տեսաուղերձներ են փոխանցել իրենց ընտանիքի անդամներին:

ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔՆԵՐ

Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի գրավոր հարցման՝ Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ մարզպետարանի ենթակայության տակ գործող 76 հանրակրթական դպրոցներում առկա ուսուցիչների 27 թափուր հաստիք՝ Մաթեմատիկա, Քիմիա, Կենսաբանություն, Ֆիզիկա, Անգլերեն, Ռուսերեն, Պատմություն, Արվեստ, Բնագիտություն, Ինֆորմատիկա, Շախմատ, Տեխնոլոգիա, Երաժշտություն առարկաների: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից հայտնում են, որ մասնագետ ուսուցիչների առումով վիճակն ավելի վատթար է, դպրոցներում շատ առարկաներ դասավանդում են մասնագիտական կրթություն չունեցողները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր բնակավայրի Դեմեր կոչվող տարածքում մի խումբ երիտասարդներ դանակահարել են միմյանց:

Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ դանակահության պատճառը եղել է Լաչինի միջանցքի փակման խոսակցությունը: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ երիտասարդները քաղաքական թեմաներից են սկսել խոսել, թե ինչ է անում այս իշխանությունը Լաչինի միջանցքը բացելու համար, երիտասարդներից մեկը հակադարձել է, թե ինչ անի, լավ է եղել, որ փակ է մնացել, մյուսները սկսել են քննադատել: Տղաների խոսակցությունն այն աստիճան է թեժացել, որ սկսել են հարվածել միմյանց, ինչից հետո բանը հասել է դանակին: Shamshyan.com-ը գրել էր, որ հունվարի 5-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Գեղարքունիքի մարզի Վարդաձոր բնակավայրի Դեմեր կոչվող տարածքում գտնվող բացօթյա զբոսայգում Գեղարքունիքի մարզի բնակիչներ 32-ամյա Հովհաննես Ա.-ն, 23-ամյա Մաքսիմ Ա.-ն, 33-ամյա Անդրեաս Ա.-ն, 23-ամյա Էրիկ Մ.-ն, 33-ամյա Արտակ Ս.-ն, եւ 29-ամյա Վահրամ Ջ.-ն ընթրելիս են եղել: Միջանձնային հարցերի շուրջ վիճաբանություն է սկսել Հովհաննես Ա.-ի եւ Մաքսիմ Ա.-ի միջեւ, որի ընթացքում Հովհաննես Ա.-ն քարով հարվածել է Մաքսիմ Ա.-ի ոտքին, իսկ հետո փայտով մի քանի անգամ հարվածներ է հասցրել վերջինիս գլխին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Այդ ընթացքում Մայքսիմ Ա.-ն իր ձեռքում եղած ծալովի դանակով հարվածել է Հովհաննես Ա.-ի թիկունքի աջակողմյան հատվածին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

ԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ ԿԱԴՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ելնելով 2022թ. հունիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից, հարկային եւ մաքսային օրենսդրություններում կատարված փոփոխություններից, ինչպես նաեւ դատաիրավական բարեփոխումների եւ հակակոռուպցիոն ռազմավարություններով նախանշված միջոցառումների ծրագրերից՝ մեկնարկել է տնտեսական բնույթի եւ մաքսանենգության որոշ հանցագործություններով նախաքննության գործառույթը ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ՀՀ քննչական կոմիտեին փոխանցելու գործընթացը:

ՀՀ ՊԵԿ քննչական մարմնի 55 հաստիքներ, որոնցից 50-ը՝ ինքնավար (քննիչների), իսկ 5-ը՝ կառուցվածքային ստորաբաժանմանն օժանդակող քաղաքացիական ծառայողների, փոխանցվել են ՀՀ ՔԿ-ին: Այդ պաշտոններն զբաղեցնողները շարունակում են պաշտոնավարել արդեն ՀՀ քննչական կոմիտեի կազմում: Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի՝ 2023թ. հունվարի 3-ի համապատասխան հրամանով ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի հիմնական մասնագիտական ստորաբաժանումների կառուցվածքում եւ հաստիքացուցակում ավելացել է նոր՝ Տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն:

Վերջինս իր հերթին բաղկացած է 5՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ վարչություններից: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի՝ 2023թ. հունվարի 4-ի համապատասխան հրամաններով՝

-ՀՀ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության պետի պաշտոնում նշանակվել է Տիգրան Արամայիսի Հարությունյանը,

-ՀՀ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության պետի տեղակալ է նշանակվել Հայկ Հրաչիկի Կատվալյանը,

-ՀՀ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության առաջին վարչության պետի պաշտոնում նշանակվել է Ռաֆայել Ռուբենի Ղամբարյանը,

-ՀՀ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության երկրորդ վարչության պետի պաշտոնում նշանակվել է Արթուր Արշակի Գեւորգյանը,

-ՀՀ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության երրորդ վարչության պետի պաշտոնում նշանակվել է Վազգեն Աշոտի Շահնազարյանը,

-ՀՀ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության չորրորդ վարչության պետի պաշտոնում նշանակվել է Վահան Գրիգորի Ամիրխանյանը,

-ՀՀ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության հինգերորդ վարչության պետի պաշտոնում նշանակվել է Արտյոմ Միքայելի Խաչատրյանը:

Նույն հրամաններով վերջիններիս հարկային ծառայության դասային աստիճանները համապատասխանեցվել են Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոններին համապատասխանող դասային աստիճաններին: Նույն ընթացակարգով նշանակումներ են կատարվել նաեւ նորաստեղծ վարչության ինքնավար (քննիչների) մյուս պաշտոններում:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐՈՐԴԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Հունվարի 9-ին՝ ժամը 01:29-ին, Արարատի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Վեդի-Լանջառ ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ. կան տուժածներ:

Պարզվել է, որ Վեդի-Լանջառ ավտոճանապարհի 38-րդ կմ-ին Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝ Հ. Խ.՝ ծնված 1991 թ.) դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ մոտ 100 մետր գլորվել ձորը. վարորդը եւ ուղեւոր Ն. Գ.-ն (ծնված 1994 թ.) տեղում մահացել են, իսկ ուղեւորներ Ռ. Գ.-ն (ծնված 1988 թ.) եւ Ծ. Ա.-ն (ծնված 1992 թ.) հոսպիտալացվել են Արարատ քաղաքի ԲԿ, որտեղ բժիշկները Ռ. Գ.-ի առողջական վիճակը գնահատել են միջին ծանրության, իսկ Ծ.Ա.-ինը՝ բավարար:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան, փակել գազի բալոնի փականը, դիերը դուրս են բերել ձորից եւ մոտեցրել շտապօգնության մեքենային:

ԾԵԾԵԼ Է ՀՈՐԵՂԲՈՐԸ

Հունվարի 8-ին՝ ժամը 17.00-ին, ոստիկանության Կապանի բաժին հաղորդում էր ստացվել, որ շտապօգնության խումբը կանչով մեկնել է Կապան քաղաքի Գարեգին Նժդեհի 1-ին նրբանցքի տներից մեկը: Տարբեր աստիճանի այրվածքներ ստացած 52-ամյա տանտերը հիվանդանոց տեղափոխելիս շտապօգնության մեքենայում մահացել էր: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքից:

Ըստ դատաբժշկի՝ դիակի վրա առկա են բռնության հետքեր՝ կտրած-ծակած վերքերի տեսքով:

Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության եւ Կապանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Գարեգին Նժդեհի 1-ին նրբանցքի նշված տանը տեղի ունեցած վիճաբանության ժամանակ 52-ամյա տղամարդուն ծեծի ենթարկել եւ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ էր պատճառել եղբոր 29-ամյա որդին, այնուհետեւ հետքերը թաքցնելու նպատակով այրել էր անկողինը, որի մեջ հորեղբայրն էր՝ անգիտակից վիճակում:

29-ամյա երիտասարդը ձերբակալվել եւ տարվել է Կապանի բաժին, որտեղ ներկայացրել է դիմում-մեղայական: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Սյունիքի մարզային քննչական վարչություն: Նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հավելենք, որ ArmLur.am-ն ավելի վաղը հայտնել էր դեպքի մասին՝ նշելով նաեւ սպանության հավանական դրդապատճառը, որը եղել է սպանողի հայրիկին հայհոյելը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 5-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 142 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

1. Էդգար Արթուրի Մուշեղյանին գրավի իրավունքով պատկանող.

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Քանաքեռի 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, 11 հասցեում գտնվող 45,92 ք.մ. բնակելի տուն, 122,18 ք.մ. ինքնակամ կառուցված շինություն եւ 0,01567 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 34407000 ՀՀ դրամ:

2. Լիանա Աշոտի Միքայելյանին գրավի իրավունքով պատկանող.

- ք. Երեւան, Աջափնյակ, Յու. Ֆուչիկի փողոց, 6 շենք, 30 հասցեում գտնվող 37,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14600000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 26.01.2023թ.-ին ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.akson.am կայքը:

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԿՇՆՈՐՀՎԻ ՏԱՐԱԿԱՐԳ

Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողներին կշնորհվի տարակարգ, ավելին՝ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար կտրամադրվի: Այս որոշման նախագիծը կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը ներկայացրել է հանրային քննարկման: Ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին տարակարգ ստացած մանկավարժական աշխատողին կտրվի հավելավճար.



1) առաջին աստիճանի տարակարգի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի 75 տոկոսի չափով,

2) երկրորդ աստիճանի տարակարգի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի 150 տոկոսի չափով,

3) երրորդ աստիճանի տարակարգի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության նվազագույն ամսական աշխատավարձի 300 տոկոսի չափով: Նշենք, որ ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողին տարակարգ տրվում է 5 տարի ժամկետով:

Որոշման այս նախագիծը մի շարք քաղաքացիների մոտ դժգոհություններ է առաջացրել:

Նրանցից Մարինե Հովհաննիսյանը պահանջում է ուսուցիչներին եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցներին տարակարգ շնորհել մշտական. «Քանի որ տարակարգ ստացած մանկավարժը այդ 5 տարիների ընթացքում կատարելագործվում եւ մասնագիտական վերելքներ է գրանցում, 5 տարի հետո խրախուսանքը դադարեցնելը ճիշտ չէ: Պահպանել ստացած տարակարգը, եթե մանկավարժը 5 տարիների ընթացքում չի դիմել ավելի բարձր տարակարգ ստանալու»:

Մեկ այլ քաղաքացի՝ Գոհար Ղազարյան անունով, ողջունել է նախագիծը եւ շնորհակալություն հայտնել «հրաշալի հնարավորության համար»՝ միաժամանակ նշելով հետեւյալը. «Մի առաջարկ-խնդրանք. որպեսզի տարակարգ ստանալու հետ կապված բոլոր հարցերի պատասխաններն ունենան մանկավարժները, մասնակից մանկավարժների անունից կխնդրեմ սեմինար-հանդիպում անցկացնել»:

Քաղաքացիների մի հատված պահանջել է վերանայել տարակարգի բնութագրիչները, իսկ մի մասն էլ դրանք իրատեսական չի համարել:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ, Գավառ ք., Միքայելյան փողոց, 29 հասցեում գտնվող 446,6 ք.մ. վարչական շենք, 155,6 ք.մ. ավտոտնակ, 125,4 ք.մ. պահեստ, 169,2 ք.մ. ավտոտնակ, 164 ք.մ. ծածկ, 69,8 ք.մ. /105,4 խ.մ./ պարիսպ եւ 0,655 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 65000000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Ախուրյանի խճուղի, թիվ 13 հասցեում գտնվող 0,03 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 8900000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Կենտրոն, Հրազդանի կիրճ, 81 հասցեում գտնվող 32,6 ք.մ. հասարակական շինություն, 29,1 ք.մ. ծածկ, աստիճանահարթակ, 17,2 ք.մ. /56,8 խ.մ./ պարիսպ եւ 0,047629 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 47800000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Կենտրոն, Ե. Քոչարի փողոց, 19 շենք, 12 հասցեում գտնվող 90,4 ք.մ. բնակարան (գույքը ծանրաբեռնված է բնակիչներով): Լոտի մեկնարկային գինը՝ 41000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 26.01.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ.-ին:

2. Շարունակելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- ք. Երեւան, Կենտրոն, Աբովյան փողոց, 26ա շենք, 63 հասցեում գտնվող 102,9 ք.մ. խանութ: Լոտի մեկնարկային գինը՝ 35000000 ՀՀ դրամ:

